# «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ


ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ

ԼԻՑԵՆԶԻԱ

ՔՊԼ-000164, 1-ին դաս

(սերիան, համարը, դասը)

ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆ

(քաղաքաշինության բնագավառում գործունեության տեսակը)

ՏՐՎԱԾ Է

2024-08-13, «ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ

(լիցենզիան տալու տարեթիվը, ամիսը, օրը, քաղաքաշինության գործունեության սուբյեկտի անվանումը,

ՀՀ, ՇԻՐԱԿ, ԳՅՈՒՄՐԻ, ԳՅՈՒՄՐԻ, ՇԻՐԱԿԱՑՈՒ Փ., 83, 40 ԲՆ.

գտնվելու վայրը՝ այդ թվում, անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անունը, ազգանունը և բնակության վայրը)

Գործողության ժամկետը՝ 13.08.2029թ.

(օրը, ամիսը, տարեթիվը)

ՀՍԿԻՉ ՀԱՄԱՐ՝ UG64-CCB2-BF61-C171

Սույն փաստաթուղթը տրված է բացառապես էլեկտրոնային եղանակով: Փաստաթղթի վավերականության ստուգումն ու էլեկտրոնային բնօրինակի ներբեռնումը հնարավոր է իրականացնել https://verify.e-gov.am Հայաստանի Հանրապետության պաշտոնական փաստաթղթերի վավերականության ստուգման միասնական համակարգի կայքում մուտքագրելով հսկիչ համարը կամ սքանավորելով արագ արձագանքման ծածկագիրը (QR Code):

## ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

N 002-26

**<<16>> հունվարի 2026թ** **ԼԻՑ ՔՊԼ-000164, 1-ին դաս**

***Պատվիրատու՝ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ***

***Նախագծող՝ <<ՃԱՆՆԱԽԱԳԻԾ>> ԻՆՍՏԻՏՈՒՏ ՍՊԸ***

***Տնօրեն՝ Դ. ՔԱՐՏԱՇՅԱՆ***

**<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն Նախագծային փորձաքննությունը դիտարկելով ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Վ.Ծաղկավան բնակավայրի ներսում 7փ-470մ, 8փ-900մ, համապատասխան իջատեղերով, համայնքային նշանակության ճանապարհների ասֆալտապատման և ջրահեռացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը՝ երաշխավորում է հաստատման:**

Նախահաշվային արժեքը կազմում է՝ 177 364.5 հազար դրամ, ներառյալ ԱԱՀ- ն:

**Առդիր՝ եզրակացությունը 2 էջից:**

**Տնօրեն՝** **Ն. Սիրեկանյան**

*«ԱՐԽԻՏԵԿՏ» ՍՊԸ*

*տնօրեն Ն. Միրեկյան*

ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

**<u>ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Վ.Ծաղկավան բնակավայրի ներսում 7փ-470մ, 8փ-900մ համապատասխան իջատեղերով, համայնքային նշանակության ճանապարհների ասֆալտապատման և ջրահեռացման աշխատանքների նախագծանախահաշվային փաստաթղթերը</u>**

*Պատվիրատու՝ ԲԵՐԴԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ*

*Նախագծող՝ <<ՃԱՆՆԱԽԱԳԻԾ>> ԻՆՍՏԻՏՈՒՏ ՍՊԸ*

*Տնօրեն՝ Դ. ՔԱՐՏԱՇՅԱՆ*

Սույն նախագիծը կատարված է համաձայն պատվիրատուի կողմից տրված տեխնիկական առաջադրանքիհիման վրա:

<<ԱՐԽԻՏԵԿՏ>> ՍՊԸ-ն փաստաթղթերը ուսումնասիրել է՝ համաձայն Բերդի համայնքապետարանի և <<ՃԱՆՆԱԽԱԳԻԾ>> ԻՆՍՏԻՏՈՒՏ ՍՊԸ-ի միջև կնքված պայմանագրի հավելված N1 տեխնիկական բնութագրի, ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի ղեկավարի կողմից տրված ճարտարապետահատակագծային առաջադրանքի և ՀՀ-ում գործող նորմատիվատեխնիկական փաստաթղթերի հիման վրա:

Նախատեսվում է ՀՀ Տավուշի մարզի Բերդ համայնքի Վ.Ծաղկավան բնակավայրի ներսում 7փ-470մ, 8փ-900մ համապատասխան իջատեղերով, համայնքային նշանակության ճանապարհների ասֆալտապատման և ջրահեռացման աշխատանքների իրականացում:

Նախագծով նախատեսված է հետևյալ շինարարական աշխատանքների իրականացում՝ գրունտների մշակում մեխանիզմով՝ կուտակումով, մշակված գրունտի տեղափոխում, ավելացված գրունտի բարձում և տեղափոխում, հողածածկույթի հարթեցում մեխանիզմով, գրունտի խտացում գլդոնով: Խճավազային հիմքի իրականացում, մակերեսների մշակում բիտումային էմուլսիայով, խոշորահատիկ ներքին շերտի և մանրահատիկ վերին շերտի ասֆալտբետոնե ծածկույթի իրականացում: Իջատեղերի կառուցման աշխատանքների իրականացում: Միաձույլ երկաթբետոնե

ջրընդունիչների կառուցում, հիդրոմեկուսացում և մետաղական ցանցի տեղադրում: Կողնակների իրականացում: Ավազակոպճային հիմքի իրականացում, հավաքովի երկաթբետոնե վաքերի տեղադրում: Հենապատի կառուցման աշխատանքների իրականացում: Մետաղական խողովակների վերանորոգում և նոր խողովակների տեղադրում, մետաղական խողովակների հիդրոմեկուսացում: Դիտահորերի բարձրացում:

*Նախահաշվային մաս*

Աշխատանքների նախահաշվային արժեքը ներկայացված է ամփոփ հաշվարկով

Հաշվարկը կազմում է` **177 364.5** հազար դրամ, ներառյալ ԱԱՀ:

Հաշվարկը կատարված է 1984թ. նորմերով և գներով կազմված տեղային նախահաշիվների հիման վրա, կիրառելով աշխատավարձի հաշվարկային ինդեքսը **2437.02** և մեքենաների շահագործման ինդեքսը **3074.10**

Նյութերի արժեքն ընդունված է 2025թ. **N10** «Ինֆորմացիոն տեղեկագրի» տվյալներով :

1.Նախագծային լուծումները համապատասխանում են ՀՀ օրենսդրության ու նորմատիվ փաստաթղթերի և նախագծային առաջադրանքի պահանջներին:

2. Նախագծի գծագրական մասը և մասնագրերը մշակված են միմյանց համապատասխան

3. Նախահաշվով նախատեսված ծավալները համապատասխանում են նախագծային ծավալներին

4.Աշխատանքային նախագծի կազմը համապատասխանեցված է ՀՀ քաղշին. նախարարի 11.09.2017 N 128-Ն հրամանով ամրագրված պահանջներին

5. Նախագծային լուծումներին առընչվող շեղումների վերացման ուղղությամբ առաջարկված փոփոխությունները, լրացումները, այլ ընտրանքային լուծումները քննարկվել են նախագծային կազմակերպության հետ համատեղ:

*Ուսումնասիրելով ներկայացված նախագիծ- նախահաշիվը*

Փորձաքննությունը երաշխավորում է փաստաթղթերի համապատասխանությունը ՀՀ օրենսդրության և նորմատեխնիկական փաստաթղթերի պարտադիր պահանջներին, նախահաշիվը կարող է սահմանված կարգով պատվիրատուի կողմից ներկայացվել համաձայնեցման և հաստատման:

***Տնօրեն՝ Ն. Սիրեկանյան***